

**ԲՈՒՂԱՐԱԿԱՆ ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑՈՒ  
ՀՈՎՎԱՊԵՏ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՄԱՔՍԻՄ  
ՊԱՏՐԻԱՐքԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ**

ԺԱՄԱՆՈՒՄ

**Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա-ի եղբայրական միրալիր հրավերով սուն թվականի մայիսի 10-ին, ուրբաթ օրը, երեկոյան, Մայր Աթոռ ժամանեց բուլղարական օրթոդոքս եկեղեցու Պետ Նորին Սրբություն Տ. Մաքսիմ Պատրիարքը:**

Մրազան Պատրիարքին ուղեկցում էին Ստարա-Զագորայի միտրոպոլիտ Բանգրատին, Մակարիոպոլի եպիսկոպոս գերաշնորհ տ. Նիկոլայը, Մուկվայի բուլղարական օրթոդոքս եկեղեցու ներկայացուցիչ հոգեշնորհ տ. Նեստոր Վարդապետը և բարեշնորհ ավագ սարկավագ դոկտ. Վասիլ Վելյանովը:

Այս առջիկ նախապես Մայր Աթոռ էին ժամանել Ռումինիայի և Բուլղարիայի հայոց առաջնորդ տ. Տիրայր Եպիսկոպոս Մարտիկյանը և Բուլղարիայի հայոց թեմական խորհրդի ատենապետ տիար Օճճիկ Ապահանը:

Մայիսի 10-ին, երեկոյան, Երևանի օդանավակայանում բուլղարական քույր եկեղեցու Մրազան Պատրիարքին և նրա շքախմբին դիմավորեցին և ողջունեցին Ամենայն Հայոց Հայրապետը, Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպիսկոպոսը, Ռուսաստանի թեմի առաջնորդ տ. Պարգև Եպիսկոպոսը, Ռումինիայի և Բուլղարիայի հայոց առաջնորդ տ. Տիրայր Եպիսկոպոսը, Մայր Աթոռի դիմանապետ տ. Արսեն Եպիսկոպոսը, Բուլղարիայի թեմական խորհրդի ատենապետ Օճճիկ Ապահանը, տ. Մուշեղ և տ. Եղիշիկ Վարդապետները, Հայաստանյաց եկեղեցու Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի ընդհանուր քարտուղար Պարգև Շահբայանը և Մայր Աթոռի պաշտոնեությունը:

Թանկագին հյուրերին օդանավակայանում դիմավորեցին և բարի գալուատ մաղթեցին Հայկ. ՍՍՀ Մինիստրների սովորին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ մեծահարգ տիար Սարգիս Գասպարյանը և տեղակալ տիար Սուրեն Հովհաննեսիանը:

Հափազանց հուզիչ էր Հայոց աշխարհում, սուրբ գրական այս հողի վրա, քույր եկեղեցիների Հովվապետների և Նրանց շքախմբի անդամների ջերմ ողջագործումը: Նրանց եղբայրական համբույրի մեջ մեկ անգամ ևս նվիրա-



որոճվեց հայ և բոլղար եկեղեցիների և ժողովուրդների սիրո և բարեկամության հոգևոր կապը:

Վերջին 15 տարիների ընթացքում երրորդ անգամ էր, որ բոլղարական օրթոդոքս եկեղեցու պատվիրակությունը լինում էր Հայոց երկրում և Մայր Աթոռ ու Էջմիածնում: 1958 թվականին և ապա 1967 թվականին Հայոց Հայրապետի հրավերով Մայր Աթոռ էր այցելել Նորին Սրբություն հանգուցյալ երջանկահիշատակ Տ. Կիրիլ Պատրիարքը, հայ ժողովորդի և Հայաստանյաց եկեղեցու մեծ ու ազնիվ բարեկամը:

1965 թվականին Հայոց Հայրապետը բոլղարական եկեղեցու Հովվապետի և սրբազն Սինոդի սիրալիի և ջերմ հրավերով պատսախան այցելություն էր տվել բոլղարական եկեղեցուն, բոլղար բարի և քրիստոնական ժողովորդի և բարեկամ երկրին:

Այդ առողիվ կատարված հանդիպումները, եկեղեցիներում և պաշտոնական ընդունելությունների ժամանակ խանդակառ և ջերմ մթնոլորտում արտասանված ճաները վերածվել էին քրիստոնեական եղայրության սրբազն տոնի և հոգևոր դաշինքի: Երկու Հայրապետները միասին աղոթել էին ոչ միայն երկու եկեղեցիների և ժողովուրդների ամբակտելի բարեկամության և գործակցության ամրապնդման համար, այլ նաև էկումենիկ ոգով՝ քրիստոնեական եկեղեցիների միության համար, հանուն ժողովուրդների ի Քրիստո եղայրության և աշխարհի խաղաղության:

Օղանավակայանում սրտառուց ողջագուրվելուց հետո երկու Հովվապետները Խրենց շքախմբերով և հանդիսավոր շքերթով առաջնորդվեցին և Էջմիածին:

Տոնականորեն հնչում էր Մայր տաճարի ավետավոր զանգերի զվարթ դողանջը:

Երկու Հայրապետները, եկեղեցական թափորով ու «Հրաշափառ»-ով տուաջնորդվեցին Մայր տաճար՝ հավատացյալ ժողովորդի խուռներամ բազմության խանդակառ արտահայտությունների ներքո: Մայր տաճարում երկու Հայրապետները Փրկչի Խջման և սեղանի առաջ միասին աղոթեցին և կրկն անգամ ողջագուրվեցին:

Հայոց Հայրապետը ջերմորեն ողջունելով և բարի գալուստ մայթելով Մաքսիմ Պատրիարքին ու նրա շքախմբի անդամներին, ասաց.

#### ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ ՄԱՅՐ ՏԱԺՄՈՒԹԻՒՄ

«Գոհություն Աստուծո Ամենակալին, որ արծանի արեց մեզ այս սուրբ տաճարի կամարների ներքո վերատին հանդիսելու և սրտագինս ողջունելու Մեր սիրեցյալ Նդրորը, Նորին Սրբություն Մաքսիմ Պատրիարքին:

Պատմական այս սուրբ տաճարը, որ 17 դարերի մի անցյալ ունի, ավելի հաճախ ապրել է տխուր ու ծանր օրեր: Սակայն, փառք Աստուծո, այս վերջին 50 տարիների ընթացքում այս տաճարը մեր հավատացյալ ժողովորդի հետ միասին ապրում է ուրախության օրեր, մանավանդ երբ այսպիսի բացառիկ առիթներ է ունենում ընդունելու մեր քույր եկեղեցիների հոգևոր պետերին:

Այսօր մենք այստեղ բերկրյազ սրտով և անկեղծ սիրո զգացումներով ընդունում ենք Տ. Մաքսիմ Պատրիարքին և նրան ուղեկցող բարձրաստիճան հոգևոր հյուրերին:

Չառ ուրախ ենք, սիրեցյալ Նդրայր ի Քրիստո, և վատահ, որ Աստուծո օրհնությունը պիտի վայելենք միասին այս օրերին և մի անգամ ևս պիտի աղոթենք այս սուրբ Սեղանի առաջ մեր երկու եկեղեցիների բարգավաճման

համար, պիտի աղոթենք մեր երկու ժողովուրդների երջանկության համար, որոնք անցյալում աշխատանք դժբախտություններ ու տառապաքներ են կրել Ծամանական Կայսրության դաժան լծի տակ:

Միասին պիտի աղոթենք դարձագ աշխարհի խաղաղության համար, որպեսզի երկրագնդի վրա ոչ մի տեղ այլևս չկրկնվեն անցյալի արյունոտ ողբերգությունները, և ժողովուրդները ապրեն ազատ ու երջանիկ որպես նոյն երկնավոր Հոր՝ Աստվծո ազատ և հավասար զավակներ:

Կրկն անգամ ողջունում ենք Ձեր բարի ժամանումը և Էջմիածին և մաղթում, որ Աստված օրինի մեր այս հանդիպումը»:

Այսուհետև պատասխան ողջույնի խոսքով հանդես եկավ Տ. Մարսիմ Պատրիարքը.

### S. ՄԱԶՄԻՄ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ ՄԱՅԹ ՏԱԺԱՐՈՒՄ

«Ձեր Սրբություն, Գերազնիվ Տեր Եղբայր Վազգեն Առաջին,

Խորապես հրճվում ենք, որ գտնվում ենք ձեր օրինաց երկրում, և Էջմիածնում, ձեր Մայր տաճարի պատմական կամարների տակ, որպես Ձեր հյուրերը: Ուրախ ենք, որ դարձագ բարերախտ հնարավորությունն ունեն տեսնելու Ձեր դեմքը, շփման մեջ մտնելու ձեր հնագոյն եկեղեցու, նրա դարավոր սրբությունների, նրա հոգնոր դասի և աստվածաներ ժողովրդի հետ:

Իմ և իմ ուղեկիցների անունից սրտագին երախտագիտություն եմ հայտնում սույն այցելության կապակցությամբ մեզ ողղված Ձեր եղբայրական հրավերի համար: Շնորհակալություն եմ հայտնում նույնպես քիչ առաջ մեզ ողղված ողջունների և բարի մաղթանքի խոսքերի համար:

Ուրախ ենք մեզ հետ բերելու և Ձեր Սրբությանը հաղորդելու բոլողարական օրթոդոքս եկեղեցու սրբազն Սինոդի, մեր աշխատաներ և խաղաղաներ բոլողար ժողովրդի, ինչպես նաև Բովդարիական բնակվող հայերի սրտագին ողջունները:

Կասկած չունենք, որ ձեր երկրում մեր այցելությունը Ձեր եղբայրական սիրապիր հոգածության և տեղական հարգու հասարակության, ձեր զինվորյաց կղերի ու հավատացյաց ժողովրդի ուշադրության ներքո, մեզ համար իսկապես հաճելի և օգտակար պիտի լինի:

Միաժամանակ վատահություն ենք հայտնում, որ մեր սույն այցելությունը պիտի հանդիսանա համեստ, բայց օգտակար ու էական մի նպաստ մեր երկու եկեղեցների բարքոք հարաբերությունների ամրապնդման և խորացման, ավելի ևս սերտացնելու համար մեր ժողովուրդների դարավոր կապերը՝ ի նպաստ աշխարհի խաղաղության:

Ամենողորմ և ամենակալ Աստված թող օրինի մեր համատեղ ջանքերը ու դրանք պսակի ցանկալի հաջողություններով՝ ի փառ Իրեն, հերշամկություն մեր ժողովուրդների ու ամբողջ աշխարհի:

«Քրիստո յարեաւ»:

Այսուհետև երկու Հայրապետները Իրենց շքախմբերով և եկեղեցական թափորով առաջնորդվեցին Վեհարան, որ տեղի ունեցավ շերս ու սրտագին գրուց երկու Հովկապետների և Նորանց շքախմբի անդամների միջև:

Ավելի ուշ Մայր Ալթոնի հարգարձան հյուրերը Վեհափառ Հայրապետի առաջնորդությամբ այցելեցին Մայր տաճարի եկեղեցական արվեստի թանգարան, Հին Վեհարանի հայրապետական թանգարան և ապա Նոր Վեհարանի պատկերասրահ-թանգարան:

Տ. Մաքսիմ Պատրիարքը, իր շքախմբի անդամներով, Մայր Աթոռում գտնվելու օրերին հյուրընկալվեց Երևանի հայրապետական վիլայում:

### ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ Ս. ԳԵՂԱՐԴԻ ՎԱՆՔ

**Մայիսի 11-ին**, շաբաթ օրը, Տ. Մաքսիմ Պատրիարքը իր շքախմբի անդամներով այցելեց և Գեղարդի վանք: Սրբազն Պատրիարքին ողեկցում էին տ. Կոմիտաս, տ. Պարգև, տ. Տիրայր, տ. Գևորգ սրբազները և տ. Հակոբ քահանա Գյոլշյանը:

Հայ հոգևոր մշակույթի կենտրոն հանդիսացող պատմական այս հոչակավոր վանքի մեծ դարրասի առաջ Տ. Մաքսիմ Պատրիարքին ու նրա շքախմբի բոլոր անդամներին աղ ու հացով դիմավորեցին վանքի վանահայր տ. Դանիել Վարդապետ Շամլյանը և վաճական միաբանությունն ու պաշտոնեությունը:

Հարգարժան հյուրերը զանգերի զվարթ դողանջի ներքո առաջնորդվեցին հնադարյան վանքի տաճարից ներս, ուր կատարեցին իրենց աղոթքն ու ուխտը: Այնուհետև մեծարգու հյուրերին պատմական մանրամասն տեղեկություններ տրվեցին և Գեղարդա վանքի մասին, որպես Հայաստանում 13-րդ դարի հոգևոր տիպի բարձրագույն ուսումնարանի և հայ մշակույթի փառավոր օջախներից մեկի:

Ս. Գեղարդա վանքում միաբանության կողմից ջերմորեն հյուրասիրվելուց հետո բարձրաստիճան հյուրերը հրաժեշտ առան ու մեկնեցին անմոռամայի տպավորություններով:

Դեպի Երևան իրենց վերադարձի ճանապարհի վրա Մայր Աթոռի թանիագին հյուրերը այցելեցին Գառնիի վերականգնվող հեթանոսական տաճար, որը Հայաստանում հելլենիստական շրջանից մնացած Ա. դարի միակ պատմական մեծարժեք ու բարձրարվեստ հուշարձանն է հանդիսանում: Գառնիի սույն պատմական հուշարձանը վերականգնվում ու վերանորգվում է, պետական միջոցներով: Տաճարի ամբողջական վերականգնման աշխատանքները, որոնք շարունակվում են շուրջ վեց տարուց ի վեր, ավարտվելու վրա են:

### ԿԻՐԱԿԱՄՑԻ ԺԱՄԵՐԳՈՒԹՅՈՒՆ, ԷԿՈՒՄԵՆԻԿ ԱՂՈԹՔ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ ՀԱՄԵՐԳ ՄԱՅՐ ՏԱԾԱՐՈՒՄ

Նույն օրը, երեկոյան ժամը 17-ին, Մայր տաճարում երկու Հայրապետները ներկա եղան կիրակամտի ժամերգությանը, որը կատարվեց Մայր Աթոռում միաբանների և հոգևոր ճեմարանի ուսանողների մասնակցությամբ:

Այնուհետև տեղի ունեցավ Էկումենիկ աղոթք, որին իրենց մասնակցությունը բերին, երգերով ու աղոթքներով, բոլղարական եկեղեցու բարձրաստիճան ներկայացուցիչները:

Մայր տաճարում կատարված Էկումենիկ սույն աղոթքի մեջ հարազատություն արտահայտվում էր մեր ժամանակները հատկանշող միջնեկեղեցական այն առողջ շարժումը, որը ձգտում է քրիստոնեական եկեղեցների մերձեցման և եղբայրական համագործակցության Քրիստոսի ընդհանրական եկեղեցու փառքի համար:

Կիրակամտի ժամերգության և Էկումենիկ աղոթքի ավարտին Մայր տաճարում տեղի ունեցավ հոգևոր համերգ՝ ի պատիվ Տ. Մաքսիմ Պատրիարքի և նրա շքախմբի անդամների: Հոգևոր համերգի ծրագրում կային հատված-

ներ հայկական, ուստական, բուլղարական և արևմտակելքոպական հոգևոր երաժշտությունից:

Մայր տաճարի երգախոսումը, խմբավար Խորեն Մելիսանեջյանի ղեկավարությամբ, խոր ապրումով և արվեստի նույր զգացողությամբ կատարեց Կոմիտաս Վարդապետի «Խորհրդուրդ խորին»-ը, «Գովլեա, Երուսաղէմ, զՏէր»-ը, «Քրիստոս պատարագեալ»-ը, Մակար Եկմալյանի «Յորժամ»-ը, Օհան Դուրյանի «Քրիստոս յարեալ»-ը և միշնադարյան «Խնկի ծառ» տաղը: Ապա տաճարի կամարների տակ խորհրդավոր հնչեցին Պ. Չայկովսկու «Գոսպոդի, պոմիլույ»-ը, Կատավալուկու «Մեոգոյետին»-ն, Դմ. Բորտիանակու Բ-րդ կոնցերտը, Սմիռնովի «Խովայիշն իմյա Գոսպոդնիա»-ն, բուլղարական «Վրկի նարողեկ վզորդենի» հոգևոր երգը (մշակում՝ Ալ. Հարությունյանի), Բախի «Տոկատա»-ն և Բախ-Գունոյի «Ավե Մարիա»-ն:

Հոգևոր համերգի ընթացքում մեներգներով հանդես եկան Մայր տաճարի երգչախմբի մենակատարութիւններ Լուսին Զաքարյանը, Մարիա Գեղումին և մենակատար Վալերի Հարությունյանը: Երգեհոնով լնկերակցում էր երգեհոնահար Լևոն Աքրահամյանը:

Հոգևոր երաժշտության սույն համերգի ներշնչող մթնոլորտում ներկա ներկաների հոգիները մի անգամ ևս վերացան դեպի քրիստոնեական եղբայրության սրբազն բարձունքները՝ «լերկիր խաղաղութիւն եւ ի մարդիկ հաճութիւն» սուրբ Ավետարանի աստվածատուր պատգամների խորհրդի մեջ:

### ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈԶ ՄԱՅՐ ՏԱԺԱՐՈՒՄ

**Մայիսի 12-ին, կիրակի օրը, Մայր տաճարում և պատարագ մատուցեց Հայոց Հայրապետը:**

«Ուրախ լեր, սուրբ եկեղեցի հայոց:

Այսօր տոն է Մայր Աթոռ և Էջմիածնի և հավատացյալ հայ ժողովրդի համար: Առավոտյան ժամը 10-ին Հայոց Հայրապետը քահանայապետական լրիվ զգեստավորման մեջ, ամպհովանու տակ և ընկերակցությամբ **S. Մաքարիմ Պատրիարքի** և նրա շքախմբի անդամների ու Մայր Աթոռի ողջ միարանության, հանդիսավոր շքերթով, երգ ու աղոթքով, Մայր տաճարի զանգերի ավետավոր ու խնդագին դողլանչի տակ առաջնորդվեց Մայր տաճար՝ օրվա հանդիսության առջիվ մատուցելու քրիստոնեական եղբայրության սուրբ պատարագը:

Վեհարանից դեպի Մայր տաճար ձգվող շքերթի երկու կողմերում կանգնած բազմությունը խանդավառ արտահայտություններով էր դիմավորում երկու Հայրապետներին և հոգևորականց դամին:


Մայր տաճարը զարդարվել էր տոնականորեն: Ամենուրեք խունկ, աղոթք և երկյուղածություն:

Ավագ բեմի առջև, ձախակողմյան դասում, **S. Մաքարիմ Պատրիարքի** համար դրված էր առանձին պատրիարքական աշտոն:

Սկսվեց հայրապետական սուրբ պատարագը: **Ս. Սեղանին սպասավորում** էին **տ. Տիրայր** և **տ. Գևորգ** եպիսկոպոսները, քահանայից դասը և Մայր Աթոռի սարկավագաց ողջ խունքը:

Սուրբ պատարագի կոմիտասյան երգեցողությունը կատարում էր Մայր տաճարի երգախոսումը՝ խմբավար Խորեն Մելիսանեջյանի շնորհալի ղեկավարությամբ:

«Հայր մեր»-ից առաջ բարողեց Վեհափառ Հայրապետը «Քրիստոս յարեալ ի մեռելոց» բնարանով՝ ողջունելով նաև Մայր Աթոռում ներկայու-



ԵՐԿՐՈՒ ՀԱՅՐԱՊԵՏԱՆԻՐԸ ԹՈՋԱՄԱՏՎԱԾ ՀԱՅ ԲՈԽԴԱՐ ԲՈՐՋԱՍՏԻՒՄՆ ՀՈԳՔՈՐԱԿԱՆԱՆԵՐՈՎ,

թյունը բոլղարական օրթոդոքս քույր եկեղեցու պատվիրակության՝ գլխավորութամբ **S. Մաքսիմ Սրբազն Պատրիարքի:**

Իր քարոզի ավարտին Հայոց Հայրապետը եղբայրորեն Ավագ սեղան հրավիրեց Նորին Սրբություն **S. Մաքսիմ Պատրիարքին՝** իր ողջունն ու օրինությունը տալու հայ հավատացյալ ժողովրդին:

Հոգիշ էր Ավագ ս. սեղանի թեմի վրա երկու Հայրապետների ի Քրիստոս եղբայրության և սիրո ողջագործումը:

Նորին Սրբությունը նախ իր և իր շքախմբի անդամների անունից սըրտագին շնորհակալություն հայտնեց Հայոց Հայրապետի եղբայրական հրավիրի, շերմ դիմավորման և ողջունի բարեկամությունների համար ու ապատացած առաջարկությունը:

«Մեզ հետ ենք թերում ու անձամբ Ձեզ ենք հաղորդում Մեր, բոլղարական օրթոդոքս եկեղեցու և նրա սրբազն Սինոդի, մեր հավատացյալ աշխատանքը ու խաղաղանքը բոլղար ժողովրդի, ինչպես նաև Բոլղարիայում ապրող հայերի սրտագին ողջունները:»

Կաևկած չունենք, որ Հայոց այս հինավորց երկրում և ս. Էջմիածնում մեր Աերկայությունը, Ձեր եղբայրական սիրավիր հոգածության ներքո, Մեզ համար իւլիապետ համեմէլի և օգտակար պիտի հանդիսան: Վստահ ենք միաժամանակ, որ Մեր սույն այցելությունը համեստ, բայց օգտակար ու կարևոր ժի նպաստ պիտի քերի մեր երկու եկեղեցիների, բոլղար և հայ ժողովությունների բարվոր և դարավոր բարեկամության ամրապնդմանն ու խորացմանը հօգուտ նաև աշխարհի խաղաղության:

Թող Աստված օրինի մեր այս հանդիպումը իր փառքի համար, մեր երկու ժողովուրդների երշանկության և աշխարհի բարօրության համար:»

### ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՎԵՀԱՐԱՆԻ ԳԱՀԱՍՐԱՀՈՒՄ

Ս. պատրագի ավարտին երկու Հովհանները եկեղեցական թափուկ ու ամպետվանու տակ առաջնորդվեցին Վեհարանի գահարահ, որ տեղի ունեցավ մասնավոր ընդունելություն:

Հայոց Հայրապետը բազմեց իր գահի վրա, իսկ Նորին Սրբություն **S. Մաքսիմ Պատրիարքը՝** իր համար դրված պատրիարքական մասնավոր գահի վրա: Գահարահում Աերկա էին երկու քույր եկեղեցիների բարձրաստիճան հոգևորականները, Մայր Ալթոռի միարանությունը, մայրավանքի պաշտոնությունը, Մայր տաճարի երգեցիկ խումբը և հավատացյալ ժողովուրդի մի հոծ բազմություն:

Գահարահում էին նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առներեք հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ **Ս. Գասպարյանը** և տեղակալ **Ս. Հովհաննեսյանը:**

Այս հանդիսավոր առիթով Հայոց Հայրապետը կրկին անգամ ողջունեց և բարի գալուստ մաղթեց բոլղարական օրթոդոքս եկեղեցու հոգեոր Պետին ու նրա շքախմբի անդամներին, շերմ ու բոլվանդակալից ուղերձով (Տես «Էջմիածն» ամսագիր, 1974 թ., № 7, էջ 10):

Այնուհետև հանդես եկավ **S. Մաքսիմ Պատրիարքը** Հայոց Հայրապետին ուղղված սրտագին խոսքով (Տես նույնը, էջ 12):

### ՊԱԾՈՒԱԿԱՆ ՃԱԾԿԵՐՈՒՅԹ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ժամը 15.30-ին Վեհարանի սեղանատանը, ի պատիվ **S. Մաքսիմ Պատրիարքի**, տրվեց պաշտոնական ճաշկերույթ՝ մասնակցությամբ ավելի բան երեսուն հրավիրյալների:

Որոշված ժամին երկու Հայրապետները մուտք գործեցին սեղանատուն։ Սեղանն օրինաց Հայոց Հայրապետը։ Պատվո սեղանի շորջ տեղ գրալեցին Հայոց Հայրապետը, Բողդարիայի Պատրիարքը և տիար Ս. Գասպարյանը։

Պաշտոնական սույն ճաշկերությունը ներկա էին միտրոպոլիտ Բանգրատին, տ. Նիկողայ Եպիսկոպոսը, տ. Նեստոր Վարդապետը, Վասիլ Վելյանով սարկավագը, տ. Կոմիտաս, տ. Պարգև, տ. Հովհաննես, տ. Նարեկ, տ. Գևորգ Արքապանները, տ. Մուշեղ, տ. Արիս, տ. Աղան, տ. Եղիշիկ Վարդապետները, տ. Հակոբ քնն. Գյոկչյանը, Սարգիս սրբ. Սարգսյանը։

Ծաշկերությունն ներկա էին նաև տիար Ս. Հովհաննեսյանը, տիար Օթեիկ Ապահանը, Ս. Հատիտյանը, Պ. Շահբազյանը և այլ հրավիրյալներ։

Սեղանը վերածվեց ճշմարտապես քրիստոնեական սիրո սեղանի։ Սըրտագին ու հայրենասիրական ջերմ մթնոլորտում փոխանակվեցին ողջույնի ու բարիգալստյան բաժականատեր։

Հայոց Հայրապետը առաջին բաժակն առաջարկեց օրվա պատվավոր հյուրի՝ S. Մաքսիմ Պատրիարքի կենացը, բարեմաղեկով բուլղարական քոյլը եկեղեցուն անսասանություն, պայծառություն Նորին Սրբության գահակալության օրերին, բուլղար հավատացյալ ազնիվ ու բարի ժողովովին՝ երշանկություն, բարգավաճում, և բուլղարական հայրենիքին՝ բարորություն։

Հայոց Հայրապետը իր եկույթում մի անգամ ևս վեր հանեց բուլղարական և հայ եկեղեցիների ու ժողովուրդների դարավոր բարեկամության պատմական նշանակությունը։

S. Մաքսիմ Պատրիարքը երկրորդ բաժակն առաջարկեց խմել Մայր Աթոռ ս. Էջմիածնի անսասանության և Հայոց Հայրապետի կյանքի արևշատության համար, հետևյալ գրավոր ուղերձով։

«Ձեր Սրբություն, գերաշնորհ և հոգեշնորհ հայրեր, մեծարգո պրն. Գասպարյան, սիրելի եղբայրներ և քոյլեր, սիրելի սեղանակիցներ,

Սուաշին անգամ չէ, որ գտնվում եմ Հայաստանում, որպես հայ եկեղեցու Նորին Սրբություն կաթողիկոս-Պատրիարքի հյուրը։ Երշանկաթիշատակ Կիոնիլ Պատրիարքի պաշտոնական այցելության ժամանակ ես առաջին այցելությունն կատարեցի ս. Էջմիածնի, որպես արտօնակալ Մոսկվայի բուլղարասան եկեղեցու՝ բախտը ունենալով մաս կազմելու մեր պատվիրակությանը, ու ամբողջ սրտով ապրեցի զորեալ և հոգիշ պահեր, որ պարզեց ինձ այդ չափազանց համեմի այցելությունը։ Անջնջելի են այդ օրերի իմ հուշերը ձեր գեղեցիկ երկրից, անմոռանալի է այն տպավորությունը, որ ունեցա Նորին Սրբություն Վազգեն Ա. Ամենայն Հայոց կաթողիկոսի, Նրա նախանձախնդիր գործակիցների և բարեկամ ու աշխատանք հայ ժողովորդի կողմից ցոյց տրված սրտագին հյուրընկալությունից։

Սրտառուց այն ուշադրությունը, որով շրջապատված ենք այս օրերին, մեծապես ուրախացնում է մեզ։ Այն չափազանցված հարգանք չէ, այլ անկերծո չերմ գուրգուրանք, որը բխում է բոլոր մեզ շրջապատողների սրտերի խորքից։

Սույն եղբայրական սիրո սեղանի շորջ ամենից առաջ երախտապարտ եմ զգում ինձ Նորին Սրբության հանդեպ, որպես հայ եկեղեցու հյուր, որպես բուլղարական եկեղեցու պատվիրակության ղեկավար՝ սիրալիր հրավերի համար։ Այսպիսով, թանկագին մի առիթ ևս ստեղծվեց՝ աշխարհի առջև արտահայտելու այն մերձավոր բարեկամությունը, որ գոյություն ունի մեր երկու եկեղեցիների գահակալների ու թանկանարար նաև՝ մեր երկու ժողովուրդնե-

րի միջև։ Ի սրտեւ շնորհակալ եմ Նորին Սրբություն կաթողիկոս-Պատրիարքին, այն եղբայրական զգացումների համար, որ նա տածում է մեր ժողովը դի և մեր ս. եկեղեցու հանդեպ։ Անձնապես հուզված եմ Նորին Սրբության եղբայրական ուշադրությունից, երբ երեք տարի առաջ ներկայացուցչական մի պատվիրակություն ուղարկեց Բուլղարիա՝ որպես բուլղարական օրթոդոքս սուրբ եկեղեցու գահակալ ընտրության և գահակալության մասնակցելու և այդ առթիվ իր եղբարական ողջույններն ու բարեմաղթությունները արտահայտելու համար։

#### Չերդ Սրբություն,

Ձեզ ճանաչում եմ իմ երիտասարդական օրերից, ճանաչում եմ Ձեր արժանիքները, ու հաճելի է ինձ հաստատել հայ եկեղեցու ծաղկումը Ձեր իմաստուն առաջնորդության ներքո, որպես բնական արդյունք Երկնավոր Հոր առատաձեռն օրինության ու Տիրոջ այգու մեջ Ձեր եռանդուն շաճքերի։ Հայ եկեղեցին, որպես սփյուռքահայերի պահապան-մայր, նրանց մեջ կենդանի և պահում Աստուծո հանդեպ հավատը ու ձեր հայրենիքի հանդեպ սերը։ Երջանիկ եմ, որ հյուրն եմ հայրենանվեր մի եկեղեցու, որի գործերը վկայում են պարտականության կատարումը հանդեպ Գերագույն Հովվապետի ու հանդեպ աշխատասեր և խաղաղ հայ ժողովրդի։

Մեր երկու ժողովուրդները եղբայրացած են վաղուց։ Պատմական ճակատագիրը նրանց այնքան մոտեցրել է միմյանց։ Ավելիայտ են այն մղումները, որոնք պայմանավորել են նրանց փոխադարձ սերը և ծանր փորձությունների ժամանակ նրանց մոտեցրել են միմյանց փոխադարձ օգնության համար։ Այս իսկ պատճառով շատ բնական էր, որ մեր մեծ բանաստեղծ Պ. Կ. Յավորովի բանաստեղծական քնարը երգեր հայ հերոս և մարտիրոս ժողովրդի թշվար պանդուխտների չարչարանքն ու տառապանքները։ Մինչև այսօր էլ յուրաքանչյուր բուլղարացու սիրտը բարախում է Յավորովի բանաստեղծության ոիթմով, եղբարական հայ ժողովրդի հանդեպ սիրո ոիթմով։

Մեր ժողովուրդների բարեկամությունը ամրապնդվում է նաև մեր նոր սերունդների ավելի երջանիկ ապագայի կերտման համար նրանց համանան ճգտումով։ Այս շինարար աշխատանքի հաջողության առաջին պայմանը խաղաղությունն է։ Ինչ էլ որ ձեռք բերեն, երբ պակասում է խաղաղությունը, ներկա ուազմական տեխնիկայի պայմանների տակ մի ակնթարթում կարող է մոխրի վերածվել։ Այս պատճառով մեր եկեղեցիներն ու ժողովուրդները համոզում խաղաղություն են քարոզում ու եռանդով աշխատում, որպեսզի երկրագնդի բոլոր ժողովուրդները ձեռք բերեն այն։ Չեր մայրաքաղություն ու ավելի փոքր բնակավայրերում ծավալված շինարարությունը, որ ես հնարավորություն ունեցած տեսնելու, նոյնպես վկայում են, որ խաղաղության գործը, որի մարտիկների առաջավոր դիրքերում կանգնած է ՍՍՀ Միությունը, արդար է ու պիտի հայրժի չարի և խավարի ուժերին։

Նորին Սրբություն սիրելի Կաթողիկոս-Պատրիարք Վազգեն Ա-ի համար Աստծոց հայցում եմ արևատություն, առողջություն և ուժ, որպեսզի նոյն նախանձախնդրությամբ կատարի իր եկեղեցանվեր և հայրենասիրական ծառայությունը։

Եղբայր հայ ժողովրդին մաղթում եմ առաջադիմություն և վերելք շին արարության ասպարեզում՝ հանուն էլ ավելի երջանիկ ապագայի։

Բոլոր սեղանակիցների կենացը»։

Հայոց Հայրապետը երրորդ բաժակն առաջարկեց խմել Տ. Մաքսիմ Պատրիարքի շքախմբի անդամների կենացը՝ շեշտելով յուրաքանչյուրի հոգե-

վոր ու անձնիր ծառայությունը իրենց սուրբ եկեղեցուն, բոլորն էլ ընտրյալ հոգիներ, որոնք Տ. Մաքսիմ Պատրիարքի ղեկավարության և օրինության ներքո առաքեական-հայունասիրական փառավոր գործ են կատարում ի փառ Քրիստոսի և ի բարօրություն հայրենիաց:

Այնուհետև Հայոց Հայրապետը շերմ սրտով բաժակ առաջարկեց ընդունելությամբ ներկա պրն. պրն. Ա. Գասպարյանի և Ս. Հովհաննիսյանի և ի դեմք նրանց՝ հայրենի բարեխմամբ կառավարության կենացը:

Այս առջեխիվ Հայոց Հայրապետը երախտագիտության և շնորհակալության սրտագիտ խոսք ուղղեց հայրենի կառավարության ներկայացուցիչ, հայ եկեղեցու գործերի խորհրդի հախագահ Ս. Գասպարյանին, որը, հանուն հայրենի կառավարության, միշտ իր բարոյական ու գործնական օժանդակությունն է բերել Հայոց Հայրապետին, Նրա գահակալության համարյա ողջ տևողության ժամանակ՝ իր պաշտոնավարության ավելի քան 14 տարիների ընթացքում, Մայր Աթոռում կատարվող եկեղեցական, մշակութային, շինարարական վերանորոգչական աշխատանքներում, ինչպես նաև միջեկեղեցական զանազան հարցերում:

Խոսք առնելով պրն. Ս. Գասպարյանը շնորհակալություն հայտնեց Հայոց Հայրապետի շերմ խոսքերի համար և հայրենի կառավարության, եկեղեցական խորհրդի ու իր անունից ողջունեց ներկայությունը բուլղարական եկեղեցու Պատրիարքի և նրա շքախմբի անդամների և մասնավորաբար շեշտեց ոռու, հայ, բուլղար ժողովուրդների պատմական ճակատագրերի ընդհանրությունը, նրանց միասնական պայքարը հանուն իրենց ազատության և այդ պայքարում կուիված նրանց դարավոր ու անքակտելի բարեկամությունը:

#### ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մայր Աթոռի հարգարժան հյուրերը մայիսի 12-ին, երեկոյան ժամը 18-ին, ովատի գնացին Օշական, և Մեսրոպ Մաշտոցի շիրմի առաջ խոնարիվելու և աղոթելու համար:

**Մայիսի 18-ին,** երկուշաբթի օրը, առավոտյան, երկու Հայրապետները իրենց շքախմբերով ուղևորվեցին Սևանա լիճ և այցելեցին Սևանի պատմանա վանքերը: Ապա կեսօրվա ճաշը կատարեցին լճակիում, «Աղթամար» հյուրանոցում:

**Մայիսի 14-ին,** երեքշաբթի օրը, առավոտյան ժամը 10-ին, երկու Հայրապետները իրենց շքախմբի անդամների ուղեկցությամբ այցելեցին Երևանում և Մեսրոպ Մաշտոցի անվան ձեռագրաց Մատենադարան, ուր նրանց ջերմորեն ու հարգալիր մեծարանքով ընդունեց Մատենադարանի տնօրենն դոկտոր-պրոֆեսոր Լևոն Խաչիկյանը՝ սույն հաստատության ղեկավարության այլ անդամներով և գիտնական աշխատակիցներով:

Մատենադարանում հյուրերը մեծ հիացմունքով ծանոթացան հայ մշակույթի, արվեստի, պատմության և գիտության անկրկնելի գանձերին և ապա երախտագիտության խոր զգացումներով դիտեցին այստեղ գորգուրանքով պահվող բուլղարական մշակույթի և դպրության վերաբերյալ թանկագին հիշատակարանները և պատմական փառախոյթերը:

#### ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՈԳԵՎՈՐ ԺԵՄԱՌԱՆՈՒՄ

Նոյն օրը, երեկոյան ժամը 19-ին, երկու Հայրապետները իրենց շքախմբերով այցելեցին հոգևոր ճեմարան ու ներկա եղան կազմակերպված ուսանողական հանդեսին:

Հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Արիս ծ. Վարդապետը, հանուն տեսչության, դասախոսական կազմի և ուսանողության, բարիգալստյան և ողջույնի հետևայալ խոսքով դիմոց քույր Եկեղեցու մեծարքու հյուրերին.

«Այսօր պատմական մի օր է մեր Եկեղեցու համար, որովհետև բացառիկ պատիվն ու հաճույքն ունենք հոգևոր ճեմարանի հարկի տակ ընդունելու Մայր Աթոռիս բարձրաստիճան հյուրին՝ բոլղարական պրավուլավ Եկեղեցու Պետին՝ Ամենապատիվ Տ. Մաքսիմ Սրբազն Պատրիարքին ու նրա շքախմբի անդամներին, որոնք արդեն մի քանի օրից ի վեր գտնվում են ա. Էջմիածնում և Սովորական Հայաստանում, Հայոց Հայուսպետի հրավերով։

Կասկածից վեր է, որ այս այցելությամբ վերանորդվում են հայ և բուլղար ժողովուրդների պատմական կապերը, որոնք գալիս են դարերի խորքից։ Մեր երկու ժողովուրդներն եւ նույն ճակատագրով են տառապել և հեծել Բյուզանդիայի և ապա օսմանյան լծի ներքո։ 1878 թ. ոռու-թուրքական պատերազմով բոլղար ժողովուրդը վերջապես ազատագրվեց օսմանյան լծից՝ տիրանալով իր անկախությանը, իսկ հայ ժողովուրդը շարունակեց ապրել իր տիտոր կյանքը օտար տիրապետության տակ, մինչև համաշխարհային առաջին պատերազմը, երբ սովորանական Թուրքիան ցեղասպանության ոճրածին մի ծրագիր գործադրեց՝ կոտորելով շուրջ երկու միլիոն հայեր, որոնց թվում՝ հազարավոր անմեղ հոգևորականներ։ Հրկիզվեցին ու քանդվեցին բազմաթիվ վանքեր ու եկեղեցիներ։ Դատարկվեց ամբողջ Արևմտյան Հայաստանը, որ դարերով ապրել և ստեղծագործել էր հայ ժողովուրդը։ Սակայն, հակառակ այս տիտոր իրողության ու համատակության, հայ ժողովուրդը բոլղար քաջարի ժողովուրդի նման, 1920 թվականին հերոսական հարտնուուններից հետո, ատեղեց ներկա Սովորական Հայաստանը՝ ոռու բարի և ազնիվ ժողովուրդի եղբայրական անշահախնդիր օգնությամբ, սովորական բազմազգ ժողովուրդների մեծ ընտանիքում։

Ինչպես բոլղարացի ժողովուրդը, հայ ժողովուրդը ևս երախտապարու է ոռու ժողովուրդին՝ նրա եղբայրական օգնության և պաշտպանության համար։ Մոռացած անցյալի տիտոր ողբերգություններն ու նահատակությունները, ժամանական է, որ առավել ևս զորանան ու ամրապնդվեն հոգևոր ու բարեկամական կապերը բոլղար և հայ ժողովուրդների միջև, մանավանդ բուլղար և հայ եկեղեցիների միջև։ Այս հապատակով կարևոր է հոգևոր դպրանցների մեր ուսանողների մեջ սերմանել այն, ինչ որ բարի է և ազնիվ ու ծառապում է քրիստոնեական եղբայրակցության հաստատմանը, քույր եկեղեցիների միջև։

Ուրախ ենք, որ Ամենապատիվ Սրբազն Պատրիարքին ուղեկցում են առաջ Բանագրատի միտրոպոլիտը և Նիկոլայ Եպիսկոպոսը, որը բոլղար հոգևոր ակադեմիայի տեսուչն է։

Մենք, հոգևոր ճեմարանի տեսչության, դասախոսական կազմի և ուսանողության անունից, բարի գալուստ ենք մաղթում ձեզ, մեր թանկագին հյուրեր, և խնդրում, որ ձեր վերադարձին մեր ողջունները հաղորդեք բոլղար հոգևոր ակադեմիայի մեր եղբայրներին։»

Այնուհետև գործադրության դրվեց ճեմարանի ուսանողության ուժերով պատրաստված գեղարվեստական մի ծրագիր՝ բաղկացած շարականներից, երգերից և արտասանություններից։

Հանդեսի ավարտին տեսչի հրավերով ճեմարանի ուսանողության և դասախոսական կազմին ուղղական օրինության խոր ասաց Տ. Մաքսիմ Սրբազն Պատրիարքը։

«Հոգեշնորհ ունկոտոր, հարգելի դասախոսներ և շատ սիրելի ուսանողներ, շատ ուրախ եմ, որ Նորին Սրբություն Վազգեն Ա կաթողիկոսը ինձ հրավիրեց և առիթն ընծայեց նաև լինելու ձեր մեջ՝ այս հոգևոր հաստատության կամարների ներքո, որտեղ պատրաստվում են հայ եկեղեցու և հայ ժողովրդի հոգևոր ծառայության կանչված ազնիվ եկեղեցական մշակներ: Մենք գալիս ենք եղբայրական Բովլդարիայից, մեզ հետ բերելով Աստուծո օրինությունը նաև կրթական այս հաստատությանը: Որպես հոգևորականներ մենք աշխատում ենք, ինչքան որ կարող ենք, տարածել Աստուծո խոսքը և արժանանալ Նրա օրինությամբ:»

Սիրելի դասախոսներ և ուսանողներ, այժմ ապրում ենք Եկումենիկմի դարաշրջանում, երբ բոլոր եկեղեցիները եղբայրորներ գործակցում են իրար հետ: Այսօր աստվածաբանությունը նպատակ ունի բացատրելու և ամրապնդելու եկեղեցիների միջև համերաշխության ոգին: Եթե անցյալում քաղաքական կամ կրոնական որևէ պատճառ կարող էր առիթ հանդիսանալ եկեղեցիների միջև համերաշխության ոգի խափանմանը, ապա այսօր նման երեւությունը տեղի ունենալ չեն կարող: «Առանց ինձ,—ինչպես ասել է Տերը,—ոչինչ անել չեք կարող»: Այսօր էլ մեզ օգնում և առաջնորդում է սուրբ Հոգին, որպեսզի հարատևնենք մեր սրբազն առաքելության մեջ, Քրիստոսի եկեղեցու փառքի համար, և ամենք էլ լինենք մեկ և ամբաժան, ինչպես մի և ամբաժան է եղել Քրիստոսի ընդհանրական եկեղեցին:

Թող Աստուծո օրինությունը լինի ձեզ հետ: Ամեն»:

Հոգևոր ճեմարանի հարկի տակ սույն հանդիպումն ավարտվեց Տերունական աղոթքով և S. Մաքսիմ Պատրիարքի օրինությամբ:

### ԱՂՈԹՔ ԾԻԾԵՇԽԱԿԱԲԵՐԴՈՒԹՅՈՒՆ ՀԱՅ ՆԱՀԱՏԱԿԱՑ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Մայիսի 14-ին, երեքշաբթի օրը, ժամը 12-ին, բովլդարական և հայ եկեղեցիների հոգևոր Պետերը իրենց շքախմբերով այցելեցին Երևանի Ծիծեռնակաբերդի հայ նահատակաց հողարձան: Հանուն բովլդարական օրթոդոքս եկեղեցու, թարմ վարդեր և մեխակներ դրվեցին հայ նահատակաց հողարձանին:

Այնուհետև տեղի ունեցավ հոգևորական մասնավոր կարգ ու աղոթք, 1915 թվականի Ապրիլյան եղեննին զոհ գնացած հայ նահատակների խմելի հիշատակին:

Բովլդարական օրթոդոքս եկեղեցու պատվիրակությունը, S. Մաքսիմ Պատրիարքի գլխավորությամբ, իր աղոթքը միացրեց Հայոց Հայրապետի և Մայր Սթոռի հոգևորականության աղոթքին՝ ոգեկոչելով հիշատակը շուրջ երկու միլիոն հայ նահատակների, որոնք իրենց կյանքը զոհարեցեցին համար իրենց քրիստոնեական հավատքի և հանուն հայրենյաց:

Այնուհետև երկու Հայրապետները Երևանում այցելեցին բովլդար ժողովրդի մեծ զավակ, հեղափոխական-բանասեղծ և հայ ժողովրդի անկեղծ բարեկամ Պեյլու Կ. Յավորովի անունը կրող միջնակարգ դպրոցը, որի բակում կանգնեցված է, ի հշան հայ ժողովրդի երախտագետ զգացմունքների, անվանի բովլդարացու կիսանդրին: Երկու Հայրապետները այստեղ ևս աղոթեցին Պ. Կ. Յավորովի կիսանդրու առաջ:

Այնուհետև դպրոցի տեսչության առաջնորդությամբ երկու Հայրապետները այցելեցին դպրոցում կազմակերպված ցուցահանդեսը, որը նվիրված էր Պ. Կ. Յավորովի կյանքին և գործունեությանը:



ՀԱՄԱՏԵՂ ԱՂՈԹՔ ԾԻՇԵՌՆԱԿԱԲԵՐԴՈՒՄ ՀԱՅ ՆԱՀԱՏԱԿԱՑ ՀԻԹԱՏԱԿԻՆ

**ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԺԱԾԿԵՐՈՒՅԹԻ Ի ՊԱՏԻՎ ԲՈՒԼՂԱՐԱԿԱՆ  
ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՎԱՐԱԿՈՒԹՅԱՆ**

Նոյն օրը, ժամը 15-ին, Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առնեթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Սարգիս Գասպարյանը, ի պատիվ Մայր Աթոռի բարձրաստիճան հյուրերի, պաշտոնական ճաշկերույթ տվեց «Անի» հյուրանոցի շքեղ դահլիճում:

Հնդունելությանը ներկա էին Հայոց Հայրապետը, բոլղարական եկեղեցու Սրբազն Պատրիարքը, բուլղար և հայ բարձրաստիճան հոգևորականներ, ինչպես նաև պաշտոնական այլ հրավիրյալներ հայ մտավորականության ներկայացուցիչներից՝ շուրջ 30 հոգի:

Հարգարժան հյուրերին շերմորեն ընդունեց և բարի գալուստ մաղթեց տիար Սարգիս Գասպարյանը, որը և դեկապարեց կառավարական սույն ճաշկերույթը:

**Պարոն Գասպարյանը** բաժակ առաջարկեց բոլղարական օրթոդոքս եկեղեցու S. Մաքիմ Սրբազն Պատրիարքի կենացը:

Նորին Սրբություն Մաքսիմ Պատրիարքը, ի պատասխան պարոն Սարգիս Գասպարյանի, իր և իր շքախմբի անունից ողջունելով Սովետական Հայաստանի կառավարության ներկայացուցին, ասաց.

«Հարգելի պրն. Գասպարյան, Ձերդ Սրբություն, գերաշնորհ հայրեր, հայ եկեղեցու և հայ ժողովրդի ներկայացուցիչներ, սիրելի սեղանակիցներ,

Հասարակաց սեղանն ամեն ժամանակ ու բոլոր ժողովուրդների մոտ մարդկանց իրար միացնելու ու սիրո կապերն ամրապնդելու ուժ ունի: Կարծում եմ, որ այսպիսի նշանակություն ունի և այս սեղանը, որը թեև պաշտոնական է, սակայն արտահայտությունն է մեր երկու ժողովուրդների ու նրանց եկեղեցիների միջև հարգանքի և բարեկամական զգացումների: Եվ որովհետև Հայկական Սոցիալիստական Հանրապետությունը մաս է կազմում Սովետական մեծ Միության, կարելի է ասել, որ սույն սեղանն արտահայտությունն է նոյնպես Սովետական Միության ու մեր Ժողովրդական Հանրապետության միջև գոյություն ունեցող ամուր կապերի ու սրտագին հարաբերությունների:

Իմ և ինձ ուղեկցողների անունից շերմագին շնորհակալություն և հայտնում գերազնիվ հյուրընկալին՝ հարգելի պրն. Գասպարյանին, իսկ հանձին նրա՝ Հայկական ՍՍՀ կառավարությանը՝ մեզ ցույց տրված սիրալիր հյուրաշիրության համար:

Մենք հնագույն մշակույթ և խիզախ ժողովուրդ ունեցող ձեր սքանչելի երկիրն այցելեցինք Մեր գերհարգելի Եղբայր Ամենայն Հայոց գերագույն կառողիկոս և Պատրիարք Նորին Սրբություն Վազգեն Ա-ի սիրալիր հրավերով: Մեր այցելության նպատակն է՝ անմիջականորեն ծանոթանալ հայ եկեղեցուն, նրա պատմությանը, աստվածաբանությանը, կառուցվածքին, վիճակին, ավանդություններին և գործունեությանը, ձեր երկրին ու նրա մեծ շինարարությանը և միաժամանակ ձեր եկեղեցու արժանավոր Գահակալի հետ կարծիքներ փոխանակել մեր փոխհարաբերությունների և եկեղեցիների միջոցով աշխարհի խաղաղության պահպանման ու ամրապնդման գործին մեր բերելիք մասնակցության մասին, որովհետև մեր օրերի գերագույն հրամայականն է՝ խաղաղության պահպանումը:

Մենք ամեն հիմք ունենք գոր մենալու մեր սույն այցելությունից: Մեր այցելության օրերին մենք հնարավորություն ունեցանք լինելու մի շարք տեսարժան վայրերում՝ կապված հայ ժողովրդի պատմության հետ, տեսնելու

մշակութային մեծարժեք հուշարձաններ, թանգարաններ ու գրադարաններ: Կարելի է անվարան ասել, որ ամբողջ Հայաստանը ներկայացնում է յորականություն մի թանգարան: Ջեր մեծանուն պատմաբան Մովսես Խորենացին համար մեծանուն ասել է, որ Հայաստանը մի «փոքր ածու» է: Սակայն իր պատմամասնության մեջ մասնաւոր գործություններ են պատմվում և գույքաբերելու ու մեծ ներուժությունը՝ ներխուժությունը՝ ներկայացնում է առաջարկ պարագաների դեմ հայերի միաձայն պայքարությունը:

Մենք այս մի քանի օրերի ընթացքում ծանոթացանք նաև ձեր երկրի նոր, սոցիալիստական շինարարության ու Հայկական ՍՍ Հանրապետությունում վերջին տարիներին ձեռք բերված տնտեսական ու տեխնիկական առաջարկությունները:

Համեմատելի է մեզ նշել, որ մեր երկու ժողովուրդների միջև դարերից ի վեր եղայլական կապեր գոյություն ունեն: Մենք՝ բոլղարներս, սիրում ենք հայերին նրանց հաստատակամության և արիության համար ու նաև այն քանի համար, որ նրանց հետ սահմանական նման ճակատագիր ենք ունեցել:

Թույլ տվեք խիստ կարճ մի ուղևորություն անել մեր մոտավոր անցյալի մեջ ու հայերի կողմից բոլղարների հանդեպ ցուցաբերված անձնազուրծության դրվագներից միայն մեկը հիշել:

1877 թվականի դեկտեմբերի 29-ը ճակատագրական մի օր Էր Թաթար Փազարճիք (Անդրկայս Փազարճիք) քաղաքի համար: Դուս ազատարար զորքերը հաղթականորեն դիմում են դեպի Սոֆիա՝ համբավավոր գեներալ Գուրկոյի հրամանատարության տակ: Սոտենում են Փազարճիքին: Օսմանյան զորքերի գլխավոր հրամանատար Սովեյման փաշան չի ուզում քաղաքը հեղտությամբ զիշել: Որոշում է այն այրել, իսկ բնակչությանը՝ ոչնչացնել: Հեռագրով Պոլսից իր որոշման մասին հավանություն է ուզում: Թաթար Փազարճիքի կայարանապետը մի խիզախ հարրոդի է լինում՝ Հովհաննես Սվաճյան անունով: Ստացվում է հեռագրով սուկալի պատասխանը. «Քաղաքն այրել, իսկ բնակչությանը երեխաների հետ կոտորել»: Մի պատ սարսուն է անցնում Սվաճյանի մարմնով: Այս ճակատագրական պահին, սակայն, նրա մեջ ծագում է մարդասիրական մի միտք. այլակինել հեռագրի բնագիրը. «Փազարճիքը պահպանել, իսկ բնակչությանը չկոտորել»: Հետևյալ օրը ուսուական զորքերը մտնում են քաղաք, և Փազարճիքի վրա շողում է ազատության արևը: Պատմական սույն հեռագրի ժապավենը, իրական և չարադրելու հնագրով, մինչև այսօր էլ մնում է քաղաքային խորհրդի արխիվում՝ հայազգի Սվաճյանի խիզախության, զոհաբերության որպես փաստ:

Բազմաթիվ հայեր մշակույթի խկական գործիքներ են եղել Բոլղարիայում՝ որպես տպագրիչ, ուկերիչ, ջուրհակ (գորգագործ և մետաքսի վարպետ), ձովիչ, մկարիչ, երաժիշտ, ուսուցիչ, պաշտոնյան և այլն:

Ներկայում Բոլղարիայի ժողովրդական Համբավետության մեջ ապրում են շուրջ 25 հազար հայեր: Նրանք բարի, պատվավոր հայրենասերներ են, աշխատանք և օրինակելի քաղաքացիներ: Լրիվ ազատություն են վայելում և իրավահավաքար ապրում են մեր ժողովրդի ուրախություններով:

Թույլ տվեք մի անգամ ևս արտահայտել իմ ուրախությունն ու շնորհակալությունը այս սրբագին ընդունելության համար և բաժակ պարպել պրն. Գասպարյանի առողջության, Հայկական ՍՍ Համբավետության և ՍՍՀ Միության ղեկավարների, հայ և Սովետական Միուս ժողովրդների երջանկության և հաջողության, խաղաղասեր ժողովրդների բարեկարգության ու աշխարհում խաղաղության հաղթանակի կենացը»:

Ընդունելության ընթացքում պրն. Գասպարյանը երկրորդ բաժակն առաջարկեց խմել Հայոց Հայրապետի կենացը՝ բարձրորեն գնահատելով Նրա եկեղեցաշեն, հայրենանվեր, խաղաղասիրական գործունեությունը, ինչպես նաև Նրա եռամդուն շամքերը միջնկեղեցական հարաբերությունների ասպարեզում:

**Հայոց Հայրապետը, խոսք առնելով, ասաց.**

«Մենք ևս կուգենայինք միանալ պարուն Գասպարյանի առաջարկած բաժակին՝ կրկին ողջունելու համար մեր թանկագին հյուրերին։ Այս առթիվ Հայու Մենք կցանկանայինք ի սրտեւ Մեր երախտագիտությունը հայտնել պրն. Գասպարյանին այս ընդունելության համար, որով մեծարվում է Մայր Աթոռուի թանկագին հյուրը։ Մեր սրտագին շնորհակալությունն ենք հայտնում նաև այն բոլոր դյուրությունների համար, որ այս առիթով ընծարվեցին մեզ՝ պատշաճ հարգանքով և մեծարանքով ընդունելու համար մեր քույր եկեղեցու բարձրաստիճան պատվիրակությանը։ Եվ իսկապես արդար ու արժան էր, որ այս բոլոր տեղի ունենար, որովհետև մեր հյուրերը սովորական հյուրեր չեն, այլ ներկայացուցիչները մի եկեղեցու և ժողովրդի, որին Մենք համարում ենք մեր մերձավորագույն և վաղեմի բարեկամը։

Այս մի քանի օրերի ընթացքում զանազան առիթներով Մենք պատեհությունը ունեցանք հիշատակելու այդ բարեկամության մասին անցյալից մինչև մեր օրերը։ Այժմ Մենք ցանկանում ենք նշել մի այլ հանգամանք ևս, որն արտահայտությունն է բուլղարական պետության սրանչելի վերաբերմունքի դեպի Բուլղարիայում ապրող հայերը։ Այսօր Բուլղարիայում խաղաղ պայմաններում ապրում են ավելի քան 20 հազար հայեր իրենց եկեղեցական, մշակութային և ազգային կազմակերպված կյանքով և վայելում են ամեն ազատություն, ինչպես իրենք՝ բուլղարացիները։ Մենք խորապես երախտապարտ ենք բուլղարական կառավարությանը այս ազնիվ վերաբերմունքի համար դեպի երկրի հայ քաղաքացիները։

Մենք համոզված ենք, որ բուլղար ժողովուրդը սիրում և գնահատում է մեզ իրեն եկեղեցի և իրեն մշակույթ ունեցող ժողովուրդը։

Այս մի քանի հաստատումներից հետո Մենք կկամնենայինք կրկին անգամ բաժակ բարձրացնել Նորին Սրբություն Մաքսիմ Պատրիարքի կենացը, որ մեզ համար խորհրդանշում է և՛ բուլղարական օրթոդոքս եկեղեցին, և՛ համայն բուլղար ժողովուրդը։

Կեցք՝ Բուլղարիան»։

#### ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՈՒՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՐԳՈ ՊԱՐՈՒՆ ԳՐԻԳՈՐ ԱՐՁՈՒՄՍԱՅԱՆԻ ՄՈՏ

**Մայիսի 14-ին,** երեքշաբթի օրը, երեկոյան ժամը 17-ին, Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի նախագահ տիար Գրիգոր Արզումանյանը ընդունեց Հայոց Հայրապետին, Բուլղարիայի Սրբազն Պատրիարքին և Նրանց ուղեկցող հայ և բուլղար բարձրաստիճան հոգևորականներին։

Երկու Հայրապետների և Մինիստրների սովետի պարուն նախագահի միջև շերմ մթնոլորտում տեղի ունեցավ սիրալիր գրույց, որի ընթացքում Հայոց Հայրապետն իր թանկագին հյուրերին ներկայացրեց մեծահարգ պարոն նախագահին։

Այսուհետև տիար Գրիգոր Արզումանյանը, հանուն հայրենի կառավարության, շերմորեն ողջունեց և բարի գալուադ մաղեց երկու Հայրապետնե-

րին և Նրանց շքախմբի անդամներին: Ապա մեծահարգ պարուն նախագահը զրոյցի ընթացքում իր պատվակոր հյուրերին պատմեց տևուսական և մշակութային շինարարության ասպարեզում Սովետական Հայաստանի ձեռք բերած նվաճումների և ապագա նեռանկարների մասին:

Սովոր զրոյցին երկա էին նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի գործերի կառավարիչ Հ. Ե. Վարդանյանը և Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առջնորդ նաև եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Սարգս Գասպարյանը:

**ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. ՄՄ.ՔՍԻՄ ՊԱՏՐԻԱՐՔԸ ՀՐԱԺԵԾ Է  
ԱՌԱՋՈՒՄ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻՑ ԵՎ ՄԱՅՐ ԱԹՈՌԻՑ**

**Մայիսի 14-ին**, երեկոյան ժամը 19-ին, Վեհարանում երկու Հայրապետների միջև տեղի ունեցավ եղբայրական տեսակցություն, որը մի անգամ ևս զոհունակությամբ հաստատվեց, որ բոլղարական և հայ եկեղեցիների միջև գոյություն ունեն բարեկամական սերտ կապեր եկումենիկ գործակցության ոգով, ինչպես նաև հայ և բոլղար ժողովորդների միջև՝ եղբայրական անկեղծ ու դարավոր բարեկամություն, որը շարունակվում է մեր օրերում, և որի զարգացման և ամրապնդման համար աշխատում և աղոթում են երկու քոյլ եկեղեցիները:

Այնուհետև հանդիսավոր իրադրության մեջ երկու Հայրապետները, շրջապատված իրենց շքախմբի անդամներով, սուրագրեցին համատեղ պաշտոնական հաղորդագրությունը՝ որպես պատմական փաստաթուղթ (Տե՛ս «ՀՅՈՒԱՃԻԱ» ամսագիր, № Ե, էջ 15):

Հոգիչ էր հրաժեշտի պահը: Համատեղ հաղորդագրության ստորագրումից հետո երկու Հայրապետները եկեղեցական թափորով առաջնորդվեցին Մայր տաճար, որը միասնական աղոթեցին և ապա շերմորն ողջագործեցին քրիստոնեական եղբայրության սիրո համբույրով:

Ավելի ուշ, ժամը 21-ին, Վեհարանի սեղանատանը հյուրերի պատվին տրվեց հրաժեշտի ճաշկերույթ: Հայոց Հայրապետը ջերմ մթնոլորտում, եղբայրական սիրավիր զգացումներով տոգորված, բարի ճանապարհ մաղթեց Մայր Աթոռի պատվարժան հյուրերին:

**S. Մաքսիմ Պատրիարքը, հրաժեշտի պահին խոսք առնելով, ասաց.**

**«Զերդ Սրբություն,**

Արդեն շուրջ մեկ շաբաթ է, ինչ Զերդ հյուրն ենք: Անցնող այս օրերը հուզումների և ոգևորությունների անմոռանալի օրեր եղան մեզ համար, արդյունք այն բոլորի, ինչ առիթ ունեցանք տեսնելու, լսելու և ապրելու ձեր սքանչելի երկրում: Յուրաքանչյուր օր և յուրաքանչյուր ժամ նորանոր սքանչելի տպավորություններ և միշտ ավելի ոգևորիչ ուրախություններ էր պատճառում մեզ: Սակայն մեր այս ժամանակավոր կյանքում ամեն ինչ վերջ ունի, նույնիսկ ուրախանիթ օրերն ու ժամերը: Այսպես, մեր հաճելի այցելությունն էլ մոտենում է իր վախճանին: Քիչ հետո մենք հրաժեշտ ենք առնելու Զերդ Սրբությունից և վերադառնալու ենք մեր հայունիքը: Բաժանման այս պահին ուզում եմ վստահեցնել Զերդ Սրբությանը, որ օրինյալ Հայաստանում մեր այցելությունը մեր երկու եկեղեցիների փոխարարերությունների պատմության մեջ պիտի նշվի որպես իսկապես հիշատակելի դեպք, իսկ մեջ պիտի թողնի անշնչելի տպավորություններ և հուշեր, որոնք մեր ամրոշ կյանքում ուրախության և գոհունակության աղբյուր պիտի հանդիսանան մեզ համար:

Խմբում եմ, Զերդ Սրբություն, ընդունել անձնապես իմ և մեր եկեղեցու պատվիրակության անդամների անկենծ երախտագիտությունը մեր հանդեպ քույց տրված եղբայրական ընդունելության համար: Թող բազումողորմ Աստված Զերդ Սրբությանը պահպանի կատարյալ առողջության մեջ, որպեսզի տակավին երկար տարիներ այսպես բազմարդյուն կերպով ծառապեր ձեր Մայր Եկեղեցում ու իրագործներ Զեր բոլոր բարի մտադրությունները: Ամեն»:

### ՄԵԿՆՈՒՄ

**Մայիսի 15-ին**, չորեքշաբթի օրը, առավոտյան ժամը 7.30-ին, Նորին Սրբություն **S. Մաքսիմ Պատրիարքը** իր շքախմբով մեկնեց Մայր Աթոռից:

Թանկագին հյուրերին Երևանի օդանավակայանում ճանապարհեց Հայոց Հայրապետը՝ շքապատված թեմակալ առաջնորդներով և Մայր Աթոռի միաբանության անդամներով:

Բովողարական օրթոդոքս եկեղեցու պատվիրակությանը Երևանի օդանավակայանում բարի ճանապարհ մայթեցին նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների սպական առջնորդներ հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ **Ա. Գասպարյանը** և տեղակալ **Ս. Հովհաննեսիյանը**:

Նորին Սրբություն **S. Մաքսիմ Պատրիարքը** Մայր Աթոռում իր այցելության օրերին, հանուն բովողարական օրթոդոքս եկեղեցու, հանուն իր և սրբազն Սինոդի, պաշտոնական եղբայրական հրավեր ուղղեց Հայոց Հայրապետին՝ փոխադարձ այցելություն կատարելու բովողարիա, այս տարվա աշնանը՝ որպես բովողարական օրթոդոքս եկեղեցու հյուրը:

Սրբազն Պատրիարք Հոր ջերմ հրավերը գոհունակությամբ և սիրով ընդունեց Հայոց Հայրապետը:

